

Հայոց լեզվի օլիմպիադայի մարզային փուլ – 2022թ.

Հարցաշար - 9-րդ դասարան

Տևողությունը 180 րոպե

Վաճառաշահ Դվին քաղաքում հրաշագործ մի բրուտ էր ապրում, որի ձեռքերում կավը դառնում էր ծաղկանկար սափոր ու կթղա, դիպակ հիշեցնող սկուտեղ՝ բոլորն էլ ակնապարար, եթերահյուս: Նրանց դիպչելիս թվում էր՝ կավը երգում է մեղմաձայն:

Բրուտի աշակերտն անքթիթ հետևում էր ուսուցչին, ամեն կերպ փորձում նմանվել նրան: Վարպետն ամեն օր գննում էր տղայի գործերը և մոտեցնելով ականջին՝ թեթևակի զարկում սափորներին, ապա ափսոսանքով տարուբերում էր գլուխը. այն չէ:

Մի օր, երբ ուսուցիչը դարձյալ չհավանեց սափորները, տղան վրդովվեց ու սրդողած հեռացավ: Համոզված էր՝ ուսուցիչն անաչառ չէ իր հանդեպ: Իր արհեստանոցը հիմնեց ու գործի անցավ: Սակայն երկու գնորդից հետո նրա դուռն այլևս ոչ ոք չթակեց:

Օրեր անց երիտասարդն ակնկոր կանգնեց ուսուցչի դիմաց: Վարպետը ժպտաց ներողամտաբար ու ասաց.

– Տղա՛ս, այդպես էլ, ավա՛դ, չհասկացար՝ աշխատանքում կատարելության հասնելու համար շատ կարևոր երկու բան կա ...

1. Ավարտի՛ր խոսքը երկու նախադասությամբ: (2 միավոր)
2. Գրի՛ր **վաճառաշահ, կթղա, դիպակ, սկուտեղ, ակնապարար, եթերահյուս, անքթիթ, սրդողել, անաչառ, ակնկոր** բառերի մեկական հոմանիշ կամ բացատրի՛ր բառակապակցությամբ: (2 միավոր)
3. Տրված բառաշարքից առանձնացրո՛ւ կազմությամբ ածանցավոր բառերը.
վերադարձ, ամենագետ, գերազանց, ապիկար, վարագույր, ընդոստ, տրամադիր, գլխարկ, ավագան, առաջնորդ ,ծածուկ, ապուշ, մահակ, օրենք, գետնամած եռանկյուն, շաղկապ, ընդունակ: (2 միավոր)
4. Կազմի՛ր 2 նախադասություն **հոգի տալ** դարձվածքի տարբեր իմաստներով: (2 միավոր)
5. Բայի ո՞ր եղանակի ո՞ր ժամանակաձևերով է շարադրված բնագիրը: (1 միավոր)
6. Տեքստում ընդգծի՛ր բնույթով **ենթակա, որոշիչ, ժամանակի պարագա, ուղիղ խնդիր** երկրորդական նախադասությունները՝ յուրաքանչյուրի վերևում նշելով տեսակը: (2 միավոր)
7. Կազմի՛ր **Մի օր էլ, երբ վարպետը դարձյալ չհավանեց սափորները, տղան նեղսրտեց ու սրդողած հեռացավ.** նախադասության շարահյուսական հոմանիշը և կետադրի՛ր: (2 միավոր)
8. Տեքստից դուրս գրի՛ր շարահարությամբ կապակցված բարդ համադասական և բարդ ստորադասական նախադասության մեկական օրինակ: (1 միավոր)
9. Բացատրի՛ր «**Կաթիլը քար է ծակում**» թևավոր խոսքը: (1 միավոր)
10. Գրի՛ր շարադրություն «**Ես մի շիվն եմ իմ հողի**» վերնագրով (երկու էջի սահմաններում): (5 միավոր)